# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումների (քննարկումների)

ՀՀ, Լոռու մարզ, գ. Շնող Արձանագրությունը կազմվել է 2017 թվականի հունիսի 27-ին

2017 թվականի հունիսի 21-ին ժամը 11:00-ից մինչև 13:05-ը ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի մշակույթի տան շենքում (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ.Շնող, 3-րդ փողոց, թիվ 1) տեղի ունեցան ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավարի (այսուհետ նաև՝ Քննարկումների պատասխանատու) կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» №1325-Ն որոշմամբ հաստատված հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգի համաձայն հրավիրված՝ «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումներ (քննարկումներ):

Հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցում էին Շնող համայնքի ավագանու անդամներ, համայքի բնակիչներ, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչներ, ընդամենը՝ 33 անձ: Հանրային լսումների (քննարկումների) ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է առանց ընդհատումների: Մասնակիցների ցանկը ստորագրություններով և հանրային լսումների (քննարկումների) ընթացքի տեսաձայանգրությունը՝ համապատասխան սկավառակով կցվում են սույն արձանագրությանը:

Հանրային լսումները (քննարկումները) վարել է Քննարկումների պատասխանատուն, ով նաև ապահովել է արձանագրումը: Մինչև հանրային լսումների (քննարկումների) սկիզբը, ինչպես նաև հանրային լսումներից (քննարկումներից) հետո՝ մինչև սույն արձանագրության կազմման պահը հանրության կողմից գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Հանրային քննարկումները բացելով Քննարկումների պատասխանատու՝ ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանը նախ ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց քննարկումներին մասնակցելու համար, այնուհետև ներկայացրեց հանրային լսումների (քննարկումների) նպատակն ու օրակարգը: Նա մասնավորապես նշեց, որ «Թեղուտ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Նախաձեռնող) կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հանրային լսումներ (քննարկումներ) անցկացնելու վերաբերյալ հայտարարությունը և նախագծին վերաբերող այլ նյութերը օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրվել են համայնքի պաշտոնական էլեկտրոնային կայքում (էջում), հայտարարության թղթային տարբերակը փակցված է եղել համայնքի ղեկավարի նստավայրի՝ հայտարարությունների համար առանձնացված ցուցատախտակի վրա, իսկ նախագծին վերաբերող նյութերի թղթային տարբերակները տեղադրված են եղել ու հասու են եղել բոլոր ծանոթանալ ցանկացողների համար ինչպես համայնքի ղեկավարի նստավայրում, այնպես էլ նախաձեռնող «Թեղուտ» ՓԲ ընկերության գրասենյակում՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Թեղուտ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 2 հասցեով:

Նախաձեռնողի անունից ելույթ ունեցավ «Թեղուտ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյանը և ներկայացրեց «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի հիմնական ցուցանիշները և պարզաբանումներ

տվեց ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ նախագծի իրականացման հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ: Նա մասնավորապես նշեց, որ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծավալների ավելացման ծրագիրը թելադրված է հանքավայրի երկրաբանական կառուցվածքով՝ բացահանքի խորացմանը զուգընթաց հանքաքարում պղնձի պարունակության աստիճանական նվազմամբ ու դրա հիման վրա թողարկվող հիմնական արտադրանքի (պղնձի խտանյութի) քանակի ու իրացման ծավալների անկում թույլ չտալու անհրաժեշտությամբ: Բացի այդ, հանքաքարի արդյունահանման ու վերամշակման ծավալների հետագա ավելացումը նախատեսված է եղել դեռևս հանքավայրի արդյունաբերական շահագործումը սկսելու ժամանակահատվածում, որի մասին բազմիցս նշվել է հանքավայրի շահագործման առաջին փուլի վերաբերյալ անցկացված հանրային քննարկումների ընթացքում: Այնուամենայնիվ, նախատեսվող գործունեությունն ամբողջությամբ իրականացվելու է ՀՀ Լոռու մարզի Շնող և Թեղուտ համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ «Թեղուտ» ՓԲ ընկերությանը պատկանող լեռնահանքային համալիրի տարածքում, լրացուցիչ հողատարածքների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանալու, իսկ Նախաձեռնողն իրականացնելու է ընդլայնման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու հետ կապված բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Հանրային լսումների (քննարկումների) մասնակիցները Նախաձեռնողի կողմից ներկայացված՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ բանավոր դիտողություններ և առաջարկություններ չարվեցին: Միաժամանակ, ներկաների կողմից բարձրացվեցին Շնող և Թեղուտ համայնքների բնակիչներին հուզող՝ Նախաձեռնող ընկերության ընթացիկ գործունեությանը, վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ շրջակա միջավայրին ու հարակից համայնքներին առնչվող) կատարմանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց պատասխանեցին Նախաձեռնող ընկերության ներկայացուցիչը և Քննարկումների պատասխանատուն:

Ստորև ներկայացվում են հանրային քննարկումների ընթացքում մասնակիցների կողմից բարձրացված՝ հանրային քննարկումների օրակարգի հարցից որոշակիորեն շեղվող հարցերն ու խնդիրները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տրված պարզաբանումները:

Լևոն Ալիխանյանը, Վարդան Վարդանյանը և Աշոտ Ադամյանը բարձրացրեցին Թեղուտի պղնձամոլիբդենային համալիրի պոչամբարի հատվածից տեղի ունեցող արտահոսքերից Շնող գետի աղտոտման հետ կապված հարցեր, պահանջելով լուծել աղտոտվածության հարցը, քանի որ դա անմիջականորեն վնաս է հասցնում համայնքի բնակիչների մասնավոր այգեգործական տնտեսություններին, ովքեր այդ գետի ջուրն օգտագործում են ոռոգման նպատակով: Ելույթ ունեցողների կողմից բարձրացվեցին համայնքի բնակչության սոցիալական վիճակին ու բժշկական զննության ու բժշկական օգնություն ստանալու հնարավորություններին վերաբերող հարցեր, այդ թվում բարձրացրեցին համայնքի բուժամբուլատորիայի կահավորման անհրաժեշտության հարցը:

Նախաձեռնողի ներկայացուցիչը պարզաբանումներ տվեց բոլոր բարձրացված հարցերի հետ կապված: Նա մասնավորապես նշեց, որ բարձրացված հարցերը չեն վերաբերում Նախաձեռնողի կողմից բերված հայտին, իսկ դրանց մի մասն անգամ չի վերաբերում Նախաձեռնողին և (կամ) նրա ընթացիկ գործունեությանը: Առանձին մասնավոր հարցերի վերաբերյալ Նախաձեռնողը կմշակի համապատասխան լուծումները և դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվությունը համայնքին կտրամադրի համանքի ղեկավարի միջոցով:

Նա նաև նշեց, որ ինչպես այս, այնպես էլ հետագայում անցկացվելիք այլ քննարկումների ընթացքում բարձրացված՝ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում օգտակար հանածոյի

արդյունահանման ծավալների ավելացմանը վերաբերող հարցադրումներն ու առաջարկությունները Նախաձեռնողի կողմից հաշվի կառնվեն հանքավայրի նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմման ու լրամշակման ընթացքում և կստանան համապատասխան լուծումներ:

Ամփոփելով, Քննարկումների պատասխանատուն և Նախաձեռնողի ներկայացուցիչը շնորհակալություն հայտնեցին բոլոր ներկաներին հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցության համար: Քննարկումների պատասխանատուն նշեց, որ ինքը հետևողական է լինելու Նախաձեռնողի կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը: Իր հերթին Նախաձեռնողի ներկայացուցիչը խնդրեց ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի վերաբերյալ հնարավոր առաջարկություններն ու դիտողությունները (առկայության դեպքում) ներկայացնել Նախաձեռնողին, որպեսզի վերջինս դրանք հաշվի առնի նախագծային ու այլ փաստաթղթերում անհրաժեշտ խմբագրական փոփոխություններ կատարելիս:

Հանրային լսումների (քննարկումների) օրակարգի և այլ հարցերի քննարկումների արդյունքում մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան

Ձեռնարկող՝

«Թեղուտ» ՓԲ ընկերություն

Գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյան